ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՏԿԶՆ-ԲԸԱՀԾՁԲ-04-16/3

ք. Երևան «08» «08» 2016թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Գզրարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
Կառավարական տուն 3	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570003667300100
Հ/Հ 900011001287	ՀՎՀՀ 01557589
ՀՎՀՀ 02578338	
Աշխատակազմի ղեկավար	**ՍՊԸ-ի Տնօրեն**
_____ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____ Վ. ԳԶՐԱՐՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«08» «08» 2016թ. կնքված
N ՀՀ-ՏԿՀՆ-ԲԸԱՀԾՁԲ-04-16/3 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մարդատար ավտոմոբիլների պահպանման ծառայություն			
	Ծառայությունների և օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Toyota Camry 2.5	
1	2		3
			4 մխոց
1	Բռնկման համակարգի ստուգում		5 000
2	Սառեցման համակարգի ստուգում		5 000
3	Յուղման համակարգի ստուգում		5 000
4	Արտածման համակարգի ստուգում		5 000
5	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում		5 000
6	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում		5 000
7	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում		5 000
8	ABS համակարգի ստուգում		5 000
9	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում		5 000
10	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում		5 000
	Ծառայությունների անվանումը	**Toyota Camry 2.5**	
	1.Շարժիչ		**4 մխոց**
11	Շարժիչի հանում և տեղադրում		120 000
12	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում		
13	Նույնը կոնդիցիոների դեպքում		
14	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		
15	Շարժիչի վերանորոգում		300 000
16	Նույնը DOHC դեպքում		
17	Նույնը V6-ի դեպքում		
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում		9 000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում		20 000
20	Նույնը աջի համար (V6)		
21	Նույնը ձախի համար (V6)		
22	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում		200 000
23	Նույնը աջի համար (V6)		
24	Նույնը ձախի համար (V6)		
25	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում		200 000
26	Շարժիչի գլխիկի վերանորոգում		220 000
27	Փականի խցուկի փոխարինում		200 000
28	Նույնը V6-ի դեպքում		
29	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում		120 000
30	Նույնը V6-ի ձախի դեպքում		
31	Նույնը V6-ի աջի դեպքում		
32	Նույնը DOHC դեպքում		
33	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում		20 000
34	Նույնը կոնդիցիոների դեպքում		
35	Նույնը DOHC դեպքում		
36	Նույնը կոնդիցիոների դեպքում		
37	Նույնը V6-ի դեպքում		
38	Նույնը կոնդիցիոների դեպքում		
39	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում		80 000
40	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		80 000
41	Մխոցային օղակների փոխարինում		280 000
42	Նույնը DOHC դեպքում		
43	Նույնը V6-ի դեպքում		

44	Թափանիվի հանում և տեղադրում		80 000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
45	Յուղի պոմպի փոխարինում		120 000
46	Ղեկավարման բլոկի վերանորոգում		150 000
47	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում		20 000
48	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում		30 000
49	Բենզամղիչի փոխարինում		18 000
50	Վառելիքի զտիչի փոխարինում		18 000
51	Վառելիքի բաքի հանում և տեղադրում		40 000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
52	Հովհարի փոկի հանում և տեղադրում		10 000
53	Հովհարի հանում և տեղադրում		15 000
54	Ռադիատորի հանում և տեղադրում		30 000
55	Նույնը կոնդիցիոների դեպքում		30 000
56	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		30 000
57	Թերմոստատի փոխարինում		8 000
58	Ջրի պոմպի փոխարինում		28 000
59	Ընդարձակող բաքի փոխարինում		8 000
60	Խլարարի հանում և տեղադրում		15 000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
61	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում		250 000
62	ԱՓՏ-ի հանում և տեղադրում		80 000
63	ԱՓՏ-ի վերանորոգում		320 000
64	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում		18 000
	5. Կախոց		
65	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում		150 000
66	Տրավերսի հանում և տեղադրում		120 000
67	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում		8 000
68	Անվակունդի առանցքակալի փոխարինում		18 000
69	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		
70	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		18 000
71	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		
72	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում		16 500
73	Զսպանակի հանում և տեղադրում		16 500
74	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		16 500
75	Ներքևի լծակի հանում և տեղադրում		12 000
76	Ներքևի լծակի վռանների փոխարինում		15 000
77	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում		8 000
78	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում		8 000
79	Գնդե հոդակապերի փոխարինում		8 000
80	Ծայրակաների հանում և տեղադրում		8 000
81	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		7 000
82	Առջևի կայունարարի վռանների փոխարինում		7 000
83	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում		7 000
84	Հետևի զսպանակի փոխարինում		16 500
85	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		16 500
86	Հետևի ձգածողի հանում և տեղադրում		16 000
87	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		7 000
88	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում		10 000
89	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում		12 000
90	Անվաբացքի կարագավորում		17 000
	6. Ղեկային մեխանիզմ		
91	Ղեկային կալունի հանում և տեղադրում		40 000
92	Նույնը V6-ի համար		
93	Ղեկային կալունի վերանորոգում		60 000
94	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում		30 000
95	Նույնը DOHC դեպքում		
96	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում		10 000
97	Նույնը DOHC դեպքում		
	7. Արգելակային համակարգ		
98	Գլխ. գլանի հանում և տեղադրում		45 000

99	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում		60 000
100	Արգելակային համակարգի օդահանում		15 000
101	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում		10 000
102	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում		10 000
103	Առջևի սուպպորտի վերանորոգում		15 000
104	Հետևի սուպպորտի վերանորոգում		15 000
105	Արգելակային փողրակի փոխարինում		25 000
106	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում		7 000
107	Հետևի կոճղակների փոխարինում		7 000
108	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում		8 000
109	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում		8 000
110	ABS-ի հանում և տեղադրում		80 000
111	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում		18 000
112	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում		25 000
	8. Էլեկտրասարքավորում		
113	Գեներատորի հանում և տեղադրում		25 000
114	Նույնը V6-ի դեպքում		
115	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում		
116	Գեներատորի վերանորոգում		150 000
117	Մեկնարկիչի հանում և տեղադրում		20 000
118	Մեկնարկիչի վերանորոգում		30 000
119	Առջևի լապտերի հանում և տեղադրում		15 000
120	Հետևի լապտերի հանում և տեղադրում		10 000
121	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում		25 000
122	Վազքաչափի հանում և տեղադրում		24 000
123	Սաքերի պանելի հանում և տեղադրում		90 000
124	Արագաչափի հանում և տեղադրում		24 000
125	Ազդանշանի հանում և տեղադրում		5 000
126	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում		15 000
127	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում		15 000
128	Մագնիտոլայի տեղադրում		10 000
129	Վառոցքի մոմերի փոխարինում		5 000
130	Կոնդիցիոների լիցքավորում		30 000
	9. Այլ ծառայություններ		
131	Անիվի հանում և տեղադրում		1 000
132	Անիվի բալանսավորում		2 000
	Օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Toyota Camry 2.5	
1	2		3
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*		6 000
2	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*		6 000
3	Յուղի զտիչ		8 000
4	Վառելանյութի զտիչ		45 000
5	Օդի զտիչ		16 000
6	Բենզոբաքի տվիչ		23 000
7	Ղեկավարման համակարգիչ		780 000
	2. Սառեցման և արտածման համակարգ		
8	Հովհարի փոկ		65 000
9	Հովհար		2*50000
10	Ռադիատոր		230 000
11	Ընդարձակող բաք		45 000
12	Թերմոստատ		28 000
13	Ջրի պոմպ		75 000
14	Սառեցման հեղուկ, *1 լիտր*		4 000
15	Փոկ		37 000
16	Խլարարի ներդիր		3*25000
17	Խլարարի կախոց		2*5000
18	Կրոնշտեյն		2*10000
19	Խլարար		1 050 000
20	Վառարանի ռադիատոր		285 000

	3. Արգելակային համակարգ		
21	Գլխ. գլան		170 000
22	Վակուումային ուժեղարար		480 000
23	Սուպպորտի մանժետ		45 000
24	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ		51 000
25	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ		45 000
26	Առջևի արգելակային սկավառակ		2*85000
27	Հետևի արգելակային սկավառակ		2*75000
28	ABS-ի տվիչ		2*130000
29	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ		3 500
30	Ձեռքի արգելակի ճոպան		2*38000, 33000
* Սգեցված վանդակների ծառայության տեսակ չի հանդիսանում			
Ծառայությունների մատուցման ժամկետը			
սկիզբը		***ավարտը***	
Պայմանագրի կնքման օրը		**25.12.2016թ.**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001287
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար
---------------- Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589

ՍՊԸ-ի Տնօրեն
---------------- Վ. ԳԶՐԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« 08 » « 08 » 2016թ. կնքված
N ՀՀ-ՏԿԶՆ-ԲԸԱՀԾՁԲ-04-16/3 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ավտոմեքենաների վերանորոգում								600000	600000	600000	600000	600000	**600000**
Ընդամենը՝									***600000***	***600000***	***600000***	***600000***	***600000***	***600000***

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*
Վճարումներն իրականացվելու են ըստ տրանսպորտային միջոցների վերանորոգման անհրաժեշտության, բայց ոչ ավել քան տվյալ ամսվա համար նախատեսված գումարից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001287
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար
______________ Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589

ՍՊԸ-ի Տնօրեն
______________ Վ. ԳԶՐԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«08» «08» 2016թ. կնքված
N ՀՀ-ՏԿԶՆ-ԲԸԱՀԾՁԲ-04-16/3 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հh _____

_____

հվhh _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հh_____

_____

հվhh_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«08» «08» 2016թ. կնքված
N ՀՀ-ՏԿԶՆ-ԲԸԱՀԾՁԲ-04-16/3 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն